

կարգալ ծանր որ մանուկը տարրերը ուղիղ իւրացնէ և զուգորդութիւնները ուղեղում ամրապնդուին: Կարգացածի բովանդակութեան հետ պէտք է ծանօթացնել մանուկին, այլապէս նրա համար նիւթը մնում է անհետաքրքիր: մանուկանդ որ ինքը գծաւարութեամբ է կարգում և բնականաբար նիւթի գեղեցկութիւնը նսեմանում է:

շարունակելի

Pessimist

ՉԱՐ ՏՂԻ ՄԱՍԻՆ ՎԻՊԱԿԸ:

ՄԱՐԿ ՏՎԷՆԻ *)

Եղել է չի եղել մը պատիկ չար տղայ, և նրա անունն էր Ջիմ, թէպէտ սովորութիւն է դառել պատիկ չար տղէրքին գրեթէ միշտ Յակոբ կոչել, ինչպէս որ շատ հեշտ է համոզուել, եթէ կարգաք կերտինօրեայ ուսումնարանն ընթերցարանները:

Նա մինչև անգամ չունէր հիւանդ մայր, — մի այնպիսի հիւանդ մայր, որ լաւ յայտնի է իւր բարեպաշտութեամբ և տառապում է թորախտից, որ անշուշտ ուրախ էլ կը լինէր գերեզման մտնել և հանգստանալ, եթէ խանդաղատանօք չսիրէր իւր անդին որդուն և չվախենար, թէ իւր մահից յետոյ մարդիկ կարող են նրա հետ վարուել սառնասրտութեամբ և անդթութեամբ: Ընթերցարանների մէջ նկարագրած չար տղէրանց մեծ մասը կոչւում են Յակոբ և ունենում են հիւանդ մայրեր, որոնք նրանց անդադրում սովորեցնում են ասել՝

«Նա այսօր յողնեցի, ես ուղում եմ հանգստանալ և այլն», որոնք օրօրը երգում են անայշ, մեղմ ձայնով, որոնք քնեցնելուց առաջ նրանց համբուրում են, անկողնու մօտ չօքում և լաց են լինում: Ո՛չ, այս տղէն այդպիսի բան խելի չունէր:

* Այս երգիծարանութիւնը շարաշար ծագրելով Ամբիկայի ընթերցարանները, ոչ նուազ իրատախան է դառնում նա եւ մեր համար: Ծանօթ. Թարգ.

Նրա անունն էր Ջիմ և նրա մայրը քույրովին առողջ էր, — ոչ թոքախտից, և ոչ ուրիշ այդպիսի բաներից չէր տառապում: Սրան մինչև անգամ կարելի էր անուանել ջլապինդ, երկաթի կարծրութեամբ մարմնեղ և դա չուներ ոչ մի բարեպաշտութեան նշան. քացի սրանից, դա մինչև անգամ անփոյթ էր իւր Ջիմի վերաբերութեամբ: Նրա կարծիքով, մի մեծ կորուստ էլ չէր լինի, եթէ Ջիմի շինքը կտրուէր: Դա նորան քուն էր մտցնում սիլիաներով և երբէք նրան չէր համբուրում քնեցնելուց տաաջ. ընդհակառակ այդ ժամանակ մի լաւ ծեծ էլ էր ուտեցնում նրան:

Մի գեղեցիկ օր այս չար տղան ծագեց մառանի բանալին, ներս գնաց այնտեղ և թաթերով խտակեց անուշ մուրաբէն: Յետոյ նա կիսատած քիլի մէջ լցրեց կուպրը, սրպէս զի մայրը չնկատէ պակասը. և դարձանալի է, այդ ժամանակ նա ոչ խղճահարուեց, և ոչ մի շշուէ լսեց իւր սրտում, որ խրատէր, թէ—Միթէ լաւ բան է, որ ես մօրս չեմ լսում: Միթէ իմ արածը մեղք չէ: Նւ սէր կընկնեն այն պատիկ չար տղերքը, որոնք իրանց սիրելի, պաշտելի մօյրերից մուրաբա են դողանում:

Նւ նա մէնակ մնացած ժամանակներում ծնկաչօր չէր ապաշխարում և ուղղուելու խոստումներ չէր անում, դեռնից չէր վեր կենում մեղքերից թեթեալած սքաով, չէր գնում իւր մօր մօտ և չէր խոստովանում իւր դործած մեղքը, ներողութիւն չէր խնդրում նրանից, իսկ մայրը չէր օրհնում նորան հպարտութեան արտասուքներով և դժուանակութեան աչքերով: Ա՛չ, այս ամենը դործում են միայն դրքի չար տղերքը, իսկ Ջիմը, թէև դարձանալի է, բայց հակառակ կերպով վարուեց. նա կերաւ մուրաբան և ինչպէս որ վայել էր արատար և հասարակ տղին՝ ինքն իրան պործանքով ասաց, թէ այս քանը «համեղ բան է եղել»: Ապա թէ քիլի մէջ ածեց կուպրը և ծիծաղով երեսակացեց, թէ ինչպէս «պառաւ կը կատաղի», երբ որ իմանայ նրա արարմունքը: Իսկ երբ մայրն իրօք իմացաւ եղելութիւնը, տղէն ուրացաւ ամեն բանը, մօրից հիմնաւոր ծեծ կերաւ, ինքն էլ մի լաւ դռաց սկսեց: Առհասարակ այս տղի բախար ըստ ամենայնի տարօրինակ էր, սրան ամենայն բան հակառակն էր վիճակւում, քան այն միւս չար Յակոբներին, որոնք ընթերցարանների մէջ են հանդիսանում:

Մի օր նա վեր ելաւ Ակորն ագաւակատիրոջ խնձորենու ծառը, որ խնձորներ անուշ անի. նրա տակի ճուղքը չկտրուեց, Ջիմը դեռնին չընկաւ, իւր ձեռքը չջարդեց. ագա-

բախտախորհ մեծ շուներ նրան չկէց, և նա յեօռ շաքաթներով հիւանդ չպառկեց անկողնում, ոչ զղջաց և ոչ էլ ուղղուեց: Չէ, չէ: Նա աջնքան խնձոր էր գողանում, ինչքան որ սիրան էր ուղում, և միշտ ծառից իջնում էր ողջ առողջ: շան հետ վարուելու եղանակը լուր գիտէր, իսկ եթէ շուներ փորձէր յարձակուել, նա նրան ագռռով էր ջարդում: Այս բոլորը շատ դարձանալի է, որովհետեւ ոչ մի բան այդպէս չէր պատահում այն օղէքքի հետ, որոնք նկարագրուած են գոյնզգոյն պատկերազարդ գրքոյկների մէջ, ուր որ մարգիկ նկարուած են ֆրանկերով, զանդակաձև գտակնեօով և կարճ վարտիքներով, իսկ կանայք մէջքը սղմած և համեօտ շրջագլեռաներով: Ոչ մի ընթերցարանում այսպիսի բաներ չեն պատահում:

Պատահեց, որ մի օր նա ուսումնարանում վարժապետից գողացաւ գրչահատը, իսկ երբ որ սկսեց վախենալ, թէ իրան կարող են բռնել գողօնքը ձեռին, նա գանակը ծածուկ գրեց Պէորդ Վիլսօնի գտակի մէջ: Այս Պէորդը այրի Վիլսօնի սրգի էր, գիւղի ամենալուր, օրինակելի տղան, որ միշտ լուում էր իւր մօրը, երբէք սուտ չէր խօսում և սրտով սիրում էր կիրանոօրեայ ուսումնարանը: Այս երբ որ զմեզին գտակից վայր ընկաւ յատակին, երբ որ խեղճ Պէորդը գլուխը ամօթից խոնարհեց և կոտ կարմիր դարձաւ, իբր թէ իւր մեղքի խոստովանութեամբ, իսկ վշտացած վարժապետը ճիպոտը նրա գլխին բարձրացրեց գանակածելու համար,—այս վայրկեանին գտարանի մէջ չերեց մի ահեղ, ալեօր դատաւոր (ինչպէս ոչ ընթերցարաններում նկարագրում են) և հանդիսաւոր կերպով չաղաղակեց:

—Ննայի՛ր այս աղնիւ աղային, ահա ձեր երկշօտ չարագործը այնտեղ է կանգնած: Երբ որ ձեր գտակը վերջացան, ես անցնում էի ուսումնարանի դռների մօտով, և ինքս թէպէտ աներևոյթ, բայց իմ աչքով տեսայ, թէ դա ի՞նչպէս գողացաւ գանակը:

Աւապս ոչ ջիմը պատիժը կրեց, և ոչ էլ պատուական դատաւորը արտասու ալից աշակերաններին արտաշարժ քորոզներ կարգաց, Պէորդի ձեռքից կարեկցանքար շրճեց, շրճաչերեց նրան, թէ այդպիսի մանուկը տրժանի է, որ խնամքներով պաշտպանուի, բայց շարեց նորա առաջ իւր տան դռները, չպատասխարեց նրան այնտեղ, չսրտաւիրեց նրան այսուհետեւ աւելել գատարանի սենեակը, կատարել ուրիշ պատուէրները, ուսումնասիրել օրէնքները, անտեսական գործերին օգնել, մնացած ժամանակ խաղալ և զուարճանալ, բայց այս ամենի հետ ամիսը վաստակել 40 ցենտ (80 կոպէկ) և վոյ՛ւլել ան-

խռով երջանկութիւն: Ա՛յ, այս բոլորը թերեւս գրքերում կատարուէր, բայց Ջիմի կեանքին վիճակուել էր ուրիշ բաներ: Ուսումնարան չէր մտել խոհական աշխարհատարը, ուստի և օրինակելի Ղէորդին առօր փառօր գանակոծեցին, իսկ Ջիմը միայն խնդում էր այս բանին, սրովհետեւ այդ չարախնդացը, ինչպէս յայտնի է, առում էր օրինակելի աղէրքին: Նա առում էր, թէ «չի կարողանում հանդուրժել այդպիսի առաքինատէրներին»: Այսպէս անտաշ կոպտութեամբ էր խօսում այս չար, անդուռալ ստահակը:

Բայց ամենից աւելի տարօրինակ բան պատահեց Ջիմին մի կիրակի օր, երբ որ նա մակոյկի մէջ նստած պտտեց, բայց զարմանալի կերպով ջրահեղձ չեղաւ, իսկ ուրիշ անգամ, դարձեալ կիրակի օրը, երբ որ նա ձուկ էր որսում, յանկարծ ստատիկ փոթորիկ քարձրացաւ, բայց և այնպէս նա կայծակնահար չեղաւ: Հաւատացնում եմ, դուք կարող էք աչքի անցնել բոլոր ընթերցարանները. այսօրուանից սկսած մինչեւ Յննդեան շքեղ և հարուստ հրատարակութիւնները, բայց մէջը այդ բաների նմանը երբէք չէք գտնի: Այլ այնտեղ դուք կը կարգաք, թէ կիրակի օրերին մակոյկով պտտուող չար աղէրքը՝ այն էլ ամենքը առանց բացառութեան խեղաւում են, և թէ փոթորկին հանդիպած բոլոր չար աղէրքը՝ եթէ կիրակի օրերն են ձուկ որսում՝ անպատճառ կորստեան են մատնուում կայծակից: Կիրակի օրերը չար աղերանց մակոյկները լճի մէջ շուռ են գալիս, կործանւում են, իսկ եթէ չար աղերքը կիրակի օրը ձուկ են որսում, միշտ փոթորիկ է տաքւում: Նո՛ճ համար քո՞ւ միշտ անհատկանալի կը մնայ, թէ ինչպէս Ջիմը աղատուել է բոլոր չար աղերանց դժբախտ վիճակակցութիւնից: Կարծում եմ, թէ այս առեղծուածի միակ լուծումը այն պիտի լինի, որ երեւի Ջիմը կախարդուած է եղել: Ոչ մի բան նրան չէր վնասում, նա մինչեւ անգամ դադանանոցի մէջ փղին հոտ քաշել տուեց մի պաղուց բռնոթի, և փիղը այնու ամենայնիւ նրա գլուխը շճմէց իւր ահարկու կնճիթով: Նա մութը տեղում պահարան էր քարձրանում, որ լակի լիմանաջուրը, բայց չէր օխալւում և չէր խմում բորակաթթուն կամ, արքայաջուրը: Նա դադանի վեր էր առնում հօրից հրացանը, կիրակի օր գնում էր որսալու, բայց երբէք չէր ջախջախում իւր երեք կամ չորս մատները:

Կատաղած ժամանակ նա իւր բռնուցքի հարուածներով իւր քուրիկի քուլքին էր սալիս, իսկ սա այդ պատճառով ամառուայ ձիւ օրերին հալումաշ չէր լինում, չէր մեռնում ներդուրթեան սրտաշարժ բառերով, որպէս զի կրկնապատկի եղբօր խղճահարուող սրտի տանջանքները: Ա՛յ, քուրիկը հա-

բուժանքին անվտանգ դիմանում էր: Վերջապէս ջիւղը փախաւ, մի նաւի մէջ իւնգի պաշտօն ստանձնեց, բայց այնպէս չվերադարձաւ, որ աշխարհի մէջ տարակուսած կորչէր, որ իւր բոլոր մերձաւորներին խաղաղութեամբ ննջած դանէր գերեզմաններում, իսկ իւր հայրենական օջախը՝ ուր որ նա անցուցել էր իւր սակի մանկութիւնը՝ բաղեզով փաթաթած, այլ նա դարձաւ դաստիարակ պէս հարբած և իսկոյն փակուեցաւ ստիկանատան մէջ:

Նա մեծացաւ, ամուսնացաւ, ահագին ընտանիք աճեցրեց և բազմացրեց, մի գոթաղա օր բոլորի գլխները ջարդոտեց, յետոյ՝ ամեն տեսակ սրահայութիւններով և խաղերայութիւններով՝ հարստացաւ: Հիմի նա ամենայն իրաւամբ համարւում է իւր հայրենիքի ամենապաշտելի արարածը, ամեն տեղ վայելում է յարգ ու պատիւ, մեծարանք և կուռափարութեան բարձր շրջանում արդէն պատուաւոր պաշտօն է կատարում:

Ինչպէս տեսնում ես, ընթերցող, մանկական ընթերցարաններում նկարագրած չար Յակօբներեց և ոչ ոք չի եղել աշխարհի երեսին, որ այնպէս շարունակ երջանիկ լինէր, ինչպէս այս մեղսատէր կախարդ Ջիւղը:

Թարգ. Ս. Մ.

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԻԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

(Շարունակութիւն)

V

Ինչպէս ասուեց, բոլոր նիւթերը, որոնք ձեռք են բերուած պեղումներով, պահւում են տեղումը, թանկարանի մէջ: Այստեղ համեմատաբար կարճ ժամանակում յաջողուել է արդէն Անիի կեանքը բնորոշելու համար հաւաքել շատ բան: Ապարանքի բոլոր քանդակների մասերը — որ առ այժմ միակ մնացորդներն են աշխարհիկ բնակարանների — մեծ հետաքրքրութիւն են առաջ բերում: Շատ